ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության կազմակերպման մասին

Սույն Համաձայնագրի անդամ պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով, որ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (այսուհետ՝ ԻԿԱՕ) հանդիսանում է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944 թվականի դեկտեմբերի 7-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա) համաձայն հիմնադրված միջազգային կազմակերպություն, որի հիմնական նպատակներն են միջազգային քաղաքացիական ավիացիայի անվտանգ և կանոնակարգված զարգացումը, ավիացիոն պատահարների և միջադեպերի քննությանը և օդանավագնացության անվտանգության և արդյունավետության հետ կապված ցանկացած այլ հարցի վերաբերյալ ստանդարտների և առաջարկվող գործելաձևերի ընդունումը,

հաշվի առնելով, որ Չիկագոյի կոնվենցիայի 26-րդ հոդվածով նախատեսվում է, որ այն պետությունը, որի տարածքում օդանավի հետ տեղի է ունեցել պատահար, որը ընդդատյա է այդ հոդվածին, «նշանակում է պատահարների հանգամանքների քննություն՝ համաձայն ԻԿԱՕ-ի կողմից առաջարկված ընթացակարգի՝ այնքանով, որքանով դա թույլ է տալիս տվյալ պետության օրենսդրությունը»,

հաշվի առնելով, որ Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ՝ «Ավիացիոն պատահարների և միջադեպերի քննություն» հավելվածում նշված են պետությունների կողմից ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման վերաբերյալ ստանդարտները և առաջարկվող գործելաձևերը,

ղեկավարվելով ավիացիոն պատահարների քննության լիազորված մարմնի անկախության սկզբունքով և ավիացիոն պատահարների քննության իրականացումն ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության տարածաշրջանային կազմակերպությանը փոխանցելու իրավունքով,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

ՀՈԴՎԱԾ 1

Սահմանումները

Սույն Համաձայնագրում՝

«Ավիացիոն պատահար» նշանակում է՝ օդանավի օգտագործման հետ կապված իրադարձություն, ինչպես այն սահմանված է Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ Հավելվածում.

«Լուրջ միջադեպ» նշանակում է՝ միջադեպ, որի հանգամանքները ցույց են տալիս ավիացիոն պատահարի տեղի ունենալու մեծ հավանականությունը, ինչպես այն սահմանված է Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ Հավելվածում.

«Քննության հանձնաժողով» նշանակում է՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության մասնագետների խումբ, որը պատրաստ է անհապաղ սկսելու ավիացիոն պատահարի կամ լուրջ միջադեպի քննություն.

«Քննություն» նշանակում է՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի կանխման նպատակով անցկացվող գործընթաց, որը ներառում է տեղեկության հավաքումը և վերլուծությունը, եզրակացությունների նախապատրաստումը, ներառյալ՝ պատճառների և/կամ հարակից գործոնների որոշումը և, անհրաժեշտության դեպքում, թռիչքների անվտանգության ապահովմանն ուղղված առաջարկությունների մշակումը.

«աշխատակիցներ» նշանակում է՝ կնքված աշխատանքային պայմանագրերի հիման վրա ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյում աշխատող անձինք:

ՀՈԴՎԱԾ 2
Բյուրոյի ստեղծումը

1. Սույն Համաձայնագրով Կողմերն ստեղծում են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրո (այսուհետ՝ Բյուրո):
2. Բյուրոն հանդիսանում է միջազգային կազմակերպություն, որն օժտված է միջազգային իրավունակությամբ:
3. Բյուրոն օժտվում է իրավասությամբ, որի ծավալները և շրջանակը սահմանվում են սույն Համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 3
Բյուրոյի նպատակները

Բյուրոյի հիմնական նպատակներն են.

ա) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության իրականացումը՝ Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ Հավելվածի դրույթներին և ԻԿԱՕ-ի այլ համապատասխան փաստաթղթերին համապատասխան,

բ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության հետ կապված հարաբերություններում սույն Համաձայնագրի Կողմերի միջև համագործակցության և փոխազդեցության զարգացումը,

գ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի վերաբերյալ տեղեկության փոխանակման նպատակով Բյուրոյի կողմից քաղաքացիական ավիացիայի կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի հետ միջազգային համագործակցությունը՝ 13-րդ Հավելվածին և Չիկագոյի կոնվենցիայի՝ 19-րդ՝ «Թռիչքների անվտանգության կառավարում» Հավելվածին համապատասխան,

դ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի անկախ և անաչառ քննության իրականացման ապահովումը մասնագիտացված անձնակազմի միջոցով, Կողմերի տարածքում, ինչպես նաև սույն Համաձայնագրի անդամ չհանդիսացող պետությունների տարածքում, որոնք Բյուրոյին պատվիրակել են ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության իրականացման լիազորությունները,

ե) պատահարների և լուրջ միջադեպերի քննության իրականացման ընդհանուր կանոնների և ընթացակարգերի մշակումը և կիրառումը՝ հաշվի առնելով Կողմերի օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները,

զ) աջակցությունը Կողմերին՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության իրականացման մասնագետների համար նախատեսված ընդհանուր տեղեկատվական նյութերի, ուղեցույցների և ձեռնարկների կիրառման հարցում,

է) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի կանխմանն ուղղված՝ կողմերի ջանքերին աջակցությունը,

ը) աջակցությունը ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության լավագույն փորձի օգտագործմանը,

թ) Կողմերի՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության մասնագետների որակավորման բարձրացումը և փորձի կատարելագործումը:

ՀՈԴՎԱԾ 4
Բյուրոյի գործառույթները

1. Բյուրոյի գործառույթներն են.

ա) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բնագավառում ընդհանուր կանոնների մշակումը և կիրառումը, որոնք համապատասխանում են Չիկագոյի կոնվենցիայի 13-րդ Հավելվածի պահանջներին՝

հաշվի առնելով ցանկացած Կողմի կողմից քննության անցկացումը Բյուրոյին փոխանցելու հնարավորությունը,

բ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի մասնագետների համար ընդհանուր խորհրդատվական նյութերի, ուղեցույցների, ձեռնարկների և ստուգաթերթերի մշակումը և օգտագործումը՝ դրանք ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ընթացքում կիրառելու նպատակով,

գ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի վերաբերյալ տեղեկության փոխանակման ընթացակարգերը սահմանող՝ Բյուրոյի փաստաթղթերի մշակումը և օգտագործումը Բյուրոյի շրջանակներում և միջազգային մասշտաբներով՝ միաժամանակ ապահովելով տվյալների համակարգի համատեղելիությունը ԻԿԱՕ-ի ավիացիոն պատահարների (միջադեպերի) վերաբերյալ տեղեկության տրամադրման համակարգի հետ,

դ) քննության հանձնաժողովի և պետական մարմինների միջև համագործակցությանն ուղղված ընթացակարգերը կանոնակարգող Բյուրոյի փաստաթղթերի մշակումը և օգտագործումը այնպես, որպեսզի ապահովվի ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի անխափան քննությունը,

ե) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությանն ուղղված՝ Կողմերի գործունեության համակարգումը,

զ) ԻԿԱՕ-ի հետ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի վերաբերյալ տեղեկության փոխանակումը,

է) քննության հանձնաժողովներին անհրաժեշտ սարքավորումներով և անհատական պաշտպանիչ միջոցներով ապահովումը,

ը) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությամբ զբաղվող մասնագետների ուսուցման կազմակերպումը և/կամ անցկացումը՝ հաշվի առնելով ԻԿԱՕ-ի առաջարկությունները,

թ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությանը մասնակցությունը կամ անցկացումը՝ այն Բյուրոյին փոխանցելու դեպքում,

ժ) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության նպատակով հատկացված տեխնիկական և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը,

ժա) ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության արդյունքներով պայմանավորված՝ թռիչքների անվտանգության վերաբերյալ առաջարկությունների թողարկումը,

ժբ) բոլոր քննությունների անցկացման համար համապատասխան միջոցների հատկացման ապահովումը՝ ներառյալ ֆինանսավորումը և որակավորված անձնակազմը,

ժգ) այլ գործառույթների իրականացումը, որոնք կարող են անհրաժեշտ լինել համապատասխան ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությունների համար՝ համաձայն սույն Համաձայնագրի:

2. Նախքան սույն հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «գ» և «դ» ենթակետերով նախատեսված փաստաթղթերի մշակումը և ընդունումը՝ Բյուրոն գործունեությունն իրականացնում է Չիկագոյի կոնվենցիայի կիրառելի հավելվածների համաձայն, որքան հնարավոր է՝ Կողմերի օրենսդրության հաշվառմամբ, իսկ քննության կատարման մասով՝ այն Կողմի օրենսդրության հիման վրա, որի տարածքում իրականացվում է ավիացիոն պատահարի կամ միջադեպի քննությունը:

3. Բյուրոն հաստատված բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում կարող է իր առջև դրված նպատակների իրականացման համար օգտագործել այն տեխնիկական լաբորատորիաները, որոնք տեղակայված են Կողմերի տարածքներում:

ՀՈԴՎԱԾ 5
Բյուրոյի աշխատանքային լեզուն

Բյուրոյի աշխատանքային լեզուն ռուսերենն է՝ որպես ԻԿԱՕ-ի պաշտոնական լեզուներից մեկը:

ՀՈԴՎԱԾ 6
Բյուրոյի կառուցվածքը

Բյուրոն կազմված է Ղեկավար խորհրդից, Բյուրոյի նախագահից, Բյուրոյի քարտուղարությունից:

ՀՈԴՎԱԾ 7
Ղեկավար խորհրդի գործառույթները

1. Ղեկավար խորհուրդը Բյուրոյի բարձրագույն մարմինն է, որը կազմված է Կողմերի լիազոր ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր Կողմից մեկական

ներկայացուցիչ, որը պետք է ունենա գործադիր իշխանության պետական մարմնի ղեկավարի տեղակալից ոչ ցածր մակարդակ:

2. Ղեկավար խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

ա) ընտրում է Բյուրոյի Նախագահին և որոշում կայացնում նրան պաշտոնից վաղաժամ ազատելու մասին.

բ) համաձայնեցնում է Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալի և Բյուրոյի Նախագահի տեղակալի նշանակումները.

գ) հաստատում է Բյուրոյի հաջորդ օրացուցային տարվա գործունեության ծրագիրը և բյուջեն.

դ) հաստատում է Բյուրոյի գործունեության ամենամյա հաշվետվությունը և Բյուրոյի բյուջեի կատարման ֆինանսական հաշվետվությունը.

ե) հաստատում է սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «ա»-«դ» ենթակետերով և 8-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը.

զ) որոշում է կայացնում միջազգային կազմակերպությունների և սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող պետությունների հետ Բյուրոյի համագործակցության նպատակահարմարության և ձևաչափի վերաբերյալ.

է) մասնակցում է Կողմերի կողմից սույն Համաձայնագիրը փոփոխելու վերաբերյալ առաջարկությունների քննարկմանը.

ը) քննարկում է Բյուրոյի գործունեության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի արդյունքները.

թ) սահմանում է Բյուրոյի Նախագահի որոշումների կայացման հիմնական չափանիշներն այն ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության հնարավորության վերաբերյալ, որոնք Բյուրոյին պատվիրակված են սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող պետության կողմից:

ՀՈԴՎԱԾ 8
Ղեկավար խորհրդի աշխատակարգը

1. Ղեկավար խորհրդի նիստերը գումարվում են տարին առնվազն երկու անգամ և, որպես կանոն, Բյուրոյի գտնվելու վայրում:

2. Բյուրոյի գործունեությանն առնչվող անհետաձգելի հարցերի լուծման նպատակով ցանկացած Կողմի կամ Բյուրոյի Նախագահի նախաձեռնությամբ կարող են գումարվել Ղեկավար խորհրդի արտահերթ նիստեր:

3. Ղեկավար Խորհրդի նիստերը անց են կացվում Ղեկավար խորհրդի Նախագահի ղեկավարությամբ:

4. Ղեկավար խորհրդի նախագահությունն իրականացվում է ռոտացիոն սկզբունքով, Կողմերից մեկի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում՝ առանց երկարաձգելու իրավունքի՝ ռուսերենի այբուբենի հերթականությամբ:

5. Ղեկավար խորհուրդի Նախագահը.

ա) վարում է Ղեկավար խորհրդի նիստերը,

բ) կազմակերպում է Ղեկավար խորհրդի աշխատանքները,

գ) իրականացնում է Ղեկավար խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստման ընդհանուր ղեկավարում:

6. Ղեկավար խորհրդի նիստերի գումարման կարգը, դրանց անցկացումը, Ղեկավար խորհրդի կողմից որոշումների կայացման ընթացակարգը, կայացված որոշումների մասին Կողմերին տեղեկացումը, ինչպես նաև Ղեկավար խորհրդի գործունեության հետ կապված այլ հարցերը սահմանվում են (կանոնակարգվում են) իր կողմից ընդունված կանոնակարգով:

7. Ղեկավար խորհրդի նիստերի գումարման ֆինանսավորման հետ կապված ծախսերը կատարվում են Բյուրոյի բյուջեի՝ այդ նպատակների համար նախատեսված միջոցների հաշվին:

Այն դեպքում, երբ Ղեկավար խորհրդի նիստը գումարվում է Կողմերից որևէ մեկի տարածքում՝ նրա հրավերով, նիստի գումարման ծախսերը հոգում է հյուրընկալող պետության լիազորված պետական մարմինը:

Ղեկավար խորհրդի անդամների և նիստի մասնակիցների գործուղման հետ կապված ծախսերը կատարում են Կողմերի՝ գործուղում ուղարկած պետական մարմինները և կազմակերպությունները:

8. Ղեկավար խորհրդի բոլոր որոշումներն ընդունվում են կոնսենսուսով:

ՀՈԴՎԱԾ 9
Բյուրոյի Նախագահը

1. Բյուրոյի Նախագահը հանդիսանում է Բյուրոյի պաշտոնատար անձ, ով իր իրավասությունների շրջանակներում պատասխանատու է Բյուրոյի վրա դրված գործառույթների իրականացման համար:

2. Բյուրոյի Նախագահն ընտրվում է Ղեկավար խորհրդի կողմից, Կողմերի կողմից առաջադրված թեկնածուների թվից, երեք տարի ժամկետով՝ հերթական պաշտոնավարման ժամկետով վերընտրվելու հնարավորությամբ:

3. Բյուրոյի Նախագահը պետք է ունենա քաղաքացիական ավիացիայի ոլորտում աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձ:

4. Բյուրոյի Նախագահն ունի երկու տեղակալ, որոնցից մեկը առաջին տեղակալն է. նրանք պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են Բյուրոյի Նախագահի կողմից՝ Ղեկավար խորհրդի համաձայնությամբ:

5. Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալը, Բյուրոյի Նախագահի տեղակալը պետք է ունենան ավիացիոն պատահարների քննությանը մասնակցության փորձ և/կամ քաղաքացիական ավիացիայի ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա փորձ:

6. Բյուրոյի Նախագահը.

ա) կազմակերպում է Բյուրոյի աշխատանքները,

բ) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջև,

գ) Ղեկավար խորհրդին է ներկայացնում Բյուրոյի գործունեության ծրագրի և բյուջեի՝ հաջորդ օրացուցային տարվա նախագծերը, ինչպես նաև դրանց կատարման հաշվետվությունները, Բյուրոյի գործառույթների իրականացման և Ղեկավար խորհրդի հանձնարարականների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները,

դ) Ղեկավար խորհրդի հետ համաձայնեցնում է Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալին և Բյուրոյի Նախագահի տեղակալին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու հարցերը,

ե) հաստատում է Բյուրոյի քարտուղարության կառուցվածքային միավորների ցանկը և Բյուրոյի հաստիքացուցակը՝ հաշվի առնելով Կողմերի կառավարությունների ղեկավարների որոշմամբ նախատեսված քանակը և Բյուրոյում աշխատավարձի վճարման պայմանները,

զ) հաստատում է Բյուրոյի աշխատակիցների նկատմամբ որակավորման պահանջները,

է) հաստատում է Բյուրոյի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները,

ը) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Բյուրոյի աշխատակիցներին,

թ) իր իրավասության շրջանակներում արձակում է հրամաններ սույն Համաձայնագրի հիմքով և Ղեկավար խորհրդի որոշումների կատարման նպատակով, ինչպես նաև Բյուրոյի ներքին կազմակերպչական աշխատանքների հարցերով,

ժ) արձակում է Բյուրոյի բոլոր աշխատակիցների կողմից պարտադիր կատարման ենթակա հրամաններ, կարգադրություններ, ցուցումներ, հաստատում է

Բյուրոյի գործունեության կանոնակարգը և հրահանգները, որոնք կարգավորում են Բյուրոյի գործունեության կազմակերպումը և գործառույթների իրականացումը,

ժա) որոշում է կայացնում ավիացիոն պատահարի կամ լուրջ միջադեպի քննության հանձնաժողով ստեղծելու մասին և հաստատում է դրա կազմը,

ժբ) որոշում է կայացնում ավիացիոն պատահարի կամ լուրջ միջադեպի քննություն անցկացնելու մասին սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող պետության կողմից լիազորությունները Բյուրոյին պատվիրակելու դեպքում:

7. Բյուրոյի Նախագահի բացակայության կամ վերջինիս կողմից պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, ինչպես նաև պաշտոնից նրան վաղաժամ ազատման դեպքում՝ ըստ սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, վերջինիս պարտականությունները ժամանակավորապես կատարում է Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալը, իսկ Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալի բացակայության կամ նրա՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Բյուրոյի Նախագահի տեղակալը:

Բյուրոյի Նախագահի լիազորությունների ժամկետի լրացման դեպքում նա իր ծառայողական պարտականություններն իրականացնում է մինչև Բյուրոյի նոր Նախագահի ընտրությունը՝ համաձայն սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի:

Հոդված 10
Բյուրոյի քարտուղարությունը

1. Բյուրոյի գործունեության ապահովումը կատարվում է Բյուրոյի քարտուղարության միջոցով:

2. Բյուրոյի քարտուղարությունը կազմված է Բյուրոյի աշխատակիցներից, այդ թվում՝ Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալից և Բյուրոյի Նախագահի տեղակալից:

3. Աշխատակիցների նշանակման քվոտաները և Բյուրոյի քարտուղարության թափուր պաշտոններին նշանակման կարգը սահմանում է Ղեկավար խորհուրդը՝ հաշվի առնելով Կողմերի մասնակցությունը Բյուրոյի ֆինանսավորմանը: Քվոտաները վերանայվում են Ղեկավար խորհրդի կողմից, յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ կամ Կողմերի փոփոխության դեպքում:

4. Բյուրոյի աշխատակիցների նշանակման ընթացքում ուսումնասիրվում են Կողմերի քաղաքացի հանդիսացող անձանց թեկնածությունները, որոնք համապատասխանում են Բյուրոյի աշխատակիցների համար սահմանված որակավորման չափանիշներին:

5. Բյուրոյի քարտուղարությունում պաշտոններ զբաղեցնելու համար թեկնածուների ընտրությունը կատարվում է մրցութային կարգով, սահմանված քվոտաների սահմաններում՝ Կողմերի ներկայացմամբ: Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալի և Բյուրոյի տեղակալի պաշտոնների ընտրությունը կատարվում է արտամրցութային կարգով:

Հոդված 11
Կողմերի դերը

Կողմերը՝

ա) ուսումնասիրում են թռիչքների անվտանգության ապահովմանն ուղղված առաջարկությունները, որոնք ստացվել են պատահարների և լուրջ միջադեպերի քննության արդյունքում, և տեղեկություն են տրամադրում Բյուրոյին՝ ձեռնարկված կամ քննարկվող միջոցների կամ որևէ միջոց չձեռնարկելու պատճառների մասին,

բ) ապահովում են ազգային օրենսդրության համապատասխանությունը սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին համապատասխան մշակված փաստաթղթերին,

գ) ապահովում են բաժնային վճարումների կատարումը՝ ըստ Բյուրոյի հաստատված բյուջեի,

դ) ընդունում և միջոցներ են ձեռնարկում՝ զերծ պահելու համար Բյուրոյի կողմից իրականացվող ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությունը քաղաքական կամ այլ միջամտությունից:

Հոդված 12
Բյուրոյի գտնվելու վայրը

1. Բյուրոյի գտնվելու վայրը Մոսկվա քաղաքն է (Ռուսաստանի Դաշնություն):

2. Ռուսաստանի Դաշնության տարածքում Բյուրոյի գտնվելու պայմանները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության և Բյուրոյի միջև կնքված առանձին միջազգային պայմանագրով:

3. Անհրաժեշտության դեպքում, Կողմերի միջև կնքված առանձին միջազգային պայմանագրերի համաձայն, Կողմերի տարածքում կարող են հիմնադրվել Բյուրոյի մասնաճյուղեր: Բյուրոյի մասնաճյուղերի գործունեության հետ կապված հարցերը, այդ թվում նաև ֆինանսական ապահովման հետ կապված հարցերը կարգավորվում են վերոնշյալ միջազգային պայմանագրերով:

4. Կողմերի տարածքում Բյուրոյի մասնաճյուղերի գտնվելու պայմանները սահմանվում են Բյուրոյի և այն Կողմի միջև կնքված առանձին միջազգային պայմանագրով, որի տարածքում գտնվում է Բյուրոյի մասնաճյուղը:

Հոդված 13
Բյուրոյի ֆինանսական ապահովումը

1. Բյուրոյի բյուջեն ձևավորվում է Կողմերի բաժնային վճարումների հաշվին, որոնց չափերը (սանդղակը) սահմանվում են Կողմերի կառավարությունների ղեկավարների կողմից և վերանայվում են ըստ անհրաժեշտության:

2. Հերթական ֆինանսական տարվա համար Բյուրոյի բյուջեն ձևավորվում է ռուսական ռուբլով: Ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում դեկտեմբերի 31-ին:

3. Բյուրոյի բյուջեի ձևավորման և կատարման մասին կանոնակարգը հաստատվում է սույն Համաձայնագրի անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների կողմից:

4. Բյուջեն պետք է հավասարակշռված լինի ըստ եկամուտների և ծախսերի:

5. Բյուրոյի գործունեությունից ստացված եկամուտները, ներառյալ քննությունների անցկացումից, մասնագետների ուսուցումից, խորհրդատվությունների տրամադրումից և այլ ծառայություններից ստացված եկամուտները, օգտագործվում են Բյուրոյի կողմից, Ղեկավար խորհրդի որոշմամբ՝ ըստ Կողմերի կառավարությունների ղեկավարների կողմից հաստատված՝ Բյուրոյի գործունեությունից ստացված միջոցների օգտագործման մասին կանոնակարգի:

6. Բյուրոյի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողության նպատակով ոչ պակաս, քան 2 տարին մեկ անգամ անցկացվում է Բյուրոյի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ: Բյուրոյի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտներն անցկացվում են Կողմերի ֆինանսական վերահսկողության մարմինների ներկայացուցիչներից կազմված աուդիտորների խմբի կողմից:

7. Բյուրոյի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտների արդյունքները ներկայացվում են Կողմերի և Ղեկավար խորհրդի քննարկմանը: Բյուրոյի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտների մասին դրույթները հաստատվում են Կողմերի կառավարությունների ղեկավարների կողմից:

Հոդված 14
Սոցիալական երաշխիքները, արտոնությունները և անձեռնմխելիությունը

1. Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները հանդիսանում են միջազգային ծառայողներ:

2. Կողմերից յուրաքանչյուրի տարածքում Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները օգտվում են սոցիալական երաշխիքներից, արտոնություններից և անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են նրանց ստանձնած լիազորությունների և պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման համար:

3. Բյուրոյի, Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիության ծավալը սահմանվում է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող հավելվածով:

Հոդված 15
Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և/կամ կիրառման հետ կապված վեճերը լուծվում են խորհրդակցությունների և Կողմերի բանակցությունների միջոցով:

Հոդված 16
Ժամանակավոր կիրառումը, ուժի մեջ մտնելը, Համաձայնագրից դուրս գալը

1. Սույն Համաձայնագիրն սկսում է ժամանակավորապես կիրառվել ստորագրման օրվանից երեսուն օրը լրանալուց հետո:

Սույն Համաձայնագիրն ստորագրած Կողմի համար, որի օրենսդրությունը չի նախատեսում միջազգային պայմանագրի ժամանակավոր կիրառման հնարավորություն, սույն Համաձայնագիրը կիրառվում է այն ամսաթվից, երբ տվյալ

Կողմի կողմից կատարվում են միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին երկրորդ գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվանից:

3. Այն Կողմի համար, որը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար ուշ է իրականացրել անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից:

4. Յուրաքանչյուր Կողմ, որը որոշում է դուրս գալ սույն Համաձայնագրից, ավանդապահին է ներկայացնում գրավոր ծանուցում Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին դուրս գալու ենթադրվող ամսաթվից առնվազն 12 ամիս առաջ:

Ավանդապահը ծանուցում է Կողմերին այդպիսի մտադրության մասին դուրս գալու մասին նման ծանուցումն ստանալու ամսաթվից 30 օրվա ընթացքում:

6. Սույն Համաձայնագրի ավանդապահ է հանդիսանում սույն Համաձայնագրի գտնվելու վայրի պետությունը:

Հոդված 17
Համաձայնագրին միանալը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է այլ պետությունների միանալու համար:

2. Սույն Համաձայնագրին միանալը կատարվում է բոլոր Կողմերի համաձայնության դեպքում:

3. Միացող պետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի ստանալու օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

Հոդված 18
Համաձայնագրում փոփոխություններ կատարելը

Կողմերի գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ձևակերպվում են առանձին արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 22-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն:

Սույն Համաձայնագրի բնօրինակն ի պահ է հանձնվում ավանդապահին:

Հայաստանի Հանրապետության անունից (վերապահումով)	**Ռուսաստանի Դաշնության անունից**
/ստորագրություն/	*/ստորագրություն/*

Հավելված՝
«Ավիացիոն պատահարների և լուրջ
միջադեպերի քննության Միջազգային
բյուրոյի ստեղծման և գործունեության
կազմակերպման մասին»
համաձայնագրին կից

ԿԱՐԳ
ԲՅՈՒՐՈՅԻ, ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ, ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

«գտնվելու վայրի պետություն»՝ «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության կազմակերպման մասին» համաձայնագրի Կողմ, որի տարածքում գտնվում է Բյուրոն,

«Բյուրոյի տարածքներ»՝ շենքեր կամ շենքերի հատվածներ, որոնք օգտագործվում են Բյուրոյի պաշտոնական նպատակների համար,

«սոցիալական ապահովագրություն»՝ պարտադիր ապահովագրություն ժամանակավոր անաշխատունակության և մայրության կապակցությամբ, պարտադիր ապահովագրություն արտադրությունում դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների դեպքում, պարտադիր բժշկական ապահովագրություն,

«Բյուրոյի գույք»՝ ամբողջ գույքը՝ ներառյալ դրամական միջոցները և այլ ակտիվները, որոնք ձեռք են բերվել (ստեղծվել են) և գտնվում են Բյուրոյի տիրապետման, օգտագործման և տնօրինման ներքո՝ «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության կազմակերպման մասին» համաձայնագրի շրջանակներում, և որոնք անհրաժեշտ են Բյուրոյին իր գործառույթներն իրականացնելիս,

«ընտանիքի անդամներ»՝ ամուսին (կին) և խնամքի տակ գտնվող անչափահաս երեխաներ և անձինք, որոնք մշտական հիմունքներով բնակվում են գտնվելու վայրի պետությունում Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների հետ:

2. Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները համարվում են միջազգային ծառայողներ: Իրենց լիազորություններն իրականացնելիս նրանք չպետք է հայցեն կամ ստանան ցուցումներ պետական իշխանության մարմիններից կամ Կողմերի պաշտոնատար անձանցից, ինչպես նաև երրորդ պետությունների իշխանություններից և այլ անձանցից ու կազմակերպություններից: Նրանք պետք է զերծ մնան ցանկացած գործողությունից, որը համատեղելի չէ իրենց՝ միջազգային ծառայողի կարգավիճակի հետ:

3. Յուրաքանչյուր Կողմ անվերապահորեն պարտավորվում է հարգել Բյուրոյի և Բյուրոյի աշխատակիցների լիազորությունների միջազգային բնույթը և նրանց վրա չունենալ ներգործություն իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականություններն իրականացնելիս:

4. Սույն Կարգին համապատասխան արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող բոլոր անձինք պարտավոր են հարգել գտնվելու վայրի պետության օրենսդրությունը՝ առանց իրենց վերապահված արտոնություններն ու անձեռնմխելիությունը վնասելու: Նրանք նաև չպետք է խառնվեն այդ պետության ներքին գործերին:

II. Բյուրոյի արտոնությունները և անձեռնմխելիությունը

5. Բյուրոն և նրա գույքն օգտվում են անձեռնմխելիությունից ցանկացած տեսակի վարչական կամ դատական միջամտությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բյուրոն ինքն է հրաժարվում անձեռնմխելիությունից:

6. Բյուրոյի շենքը, ինչպես նաև նրա արխիվը և փաստաթղթերը, այդ թվում՝ ծառայողական նամակագրությունը, անկախ դրանց գտնվելու վայրից, ենթակա չեն խուզարկության, բռնագրավման, առգրավման կամ ցանկացած այլ տեսակի միջամտության, որը կարող են խոչընդոտել Բյուրոյի բնականոն գործունեությունը:

7. Գտնվելու վայրի պետության իշխանության և կառավարման համապատասխան մարմինների ներկայացուցիչները չեն կարող մուտք գործել Բյուրոյի տարածք այլ կերպ, քան Բյուրոյի Նախագահի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ և նրանց կողմից համաձայնեցված պայմաններով՝

բացառությամբ հրդեհի կամ այլ հանգամանքների, որոնք պահանջում են պաշտպանության անհետաձգելի միջոցներ:

8. Բյուրոյի մարմինների տարածքները չեն կարող հանգրվան լինել այն անձանց համար, որոնք ցանկացած Կողմի օրենքներով գտնվում են հետապնդման մեջ կամ ենթակա են հանձնման Կողմին կամ երրորդ պետությանը:

9. Բյուրոյի տարածքների անձեռնմխելիությունն իրավունք չի տալիս դրանք օգտագործել Բյուրոյի նպատակների կամ գործառույթների հետ անհամատեղելի նպատակներով կամ Կողմի անվտանգությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերին վնաս հասցնող նպատակներով:

10. Բյուրոն ազատվում է գտնվելու վայրի պետությունում գանձվող հարկերից, վճարներից, տուրքերից և այլ վճարումներից՝ բացառությամբ այն վճարների, որոնք հանդիսանում են որոշակի տեսակի ծառայությունների դիմաց վճարումներ, և վճարներ (նվազեցումներ և ներդրումներ), որոնք վճարվում են սույն Կարգի 24-րդ և 25-րդ կետերին համապատասխան:

11. Առարկաները և այլ գույքը, որոնք նախատեսված են Բյուրոյի կողմից պաշտոնական օգտագործման համար, Կողմերի տարածքներում ազատվում են մաքսային տուրքերից, հարկերից և մաքսային վճարներից:

12. Բյուրոն համագործակցում է Կողմերի պետական իշխանության և կառավարման համապատասխան մարմինների հետ արդարադատության իրականացման ապահովման և իրավապահ մարմինների կարգադրությունների կատարման համար, ինչպես նաև սույն Կարգով նախատեսված արտոնությունների և անձեռնմխելիության հետ կապված ցանկացած չարաշահման կանխարգելման նպատակով:

III. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների արտոնությունները և անձեռնմխելիությունը

13. Բյուրոյի Նախագահը և նրա հետ բնակվող ընտանիքի անդամները, եթե նրանք չեն հանդիսանում գտնվելու վայրի պետության քաղաքացի, օգտվում են արտոնություններից և անձեռնմխելիությունից այն ծավալով, որը նախատեսված է դիվանագիտական գործակալի և նրա ընտանիքի անդամների համար «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով:

Բյուրոյի Նախագահի ընտանիքի անդամների կողմից գտնվելու վայրի պետությունում աշխատանքային գործունեություն իրականացվելու դեպքում նրանք

չեն օգտվում սույն Կարգի սույն բաժնով նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիությունից:

14. Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները.

ա) ենթակա չեն քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվության իրենց պարտականությունների կատարման ընթացքում կատարած բոլոր գործողությունների, գրավոր կամ բանավոր հայտարարությունների համար՝ բացառությամբ իրենց վարած կամ իրենց պատկանող տրանսպորտային միջոցով տեղի ունեցած ճանապարհային տրանսպորտային պատահարի հետ կապված վնասների հատուցման հայցերի դեպքերի,

բ) ազատվում են աշխատավարձերի և Բյուրոյի կողմից տրված այլ վճարումների հարկումներից,

գ) ազատվում են պետական պարտականություններից,

դ) ազատվում են գտնվելու վայրի պետություն մուտքի և ելքի սահմանափակումներից, որպես օտարերկրյա քաղաքացի՝ գրանցման պարտականությունից և ժամանակավոր բնակության թույլտվություն ստանալուց,

ե) օգտվում են հայրենադարձության այն նույն արտոնություններից, որոնցից միջազգային ճգնաժամերի ժամանակ օգտվում են դիվանագիտական ներկայացուցիչները:

15. Եթե Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները հանդիսանում են գտնվելու վայրի պետության քաղաքացիներ, նրանց վրա տարածվում են սույն Կարգի 14-րդ կետի «բ», «դ» և «ե» ենթակետերի դրույթները:

16. Բյուրոյի աշխատակիցների հետ բնակվող նրանց ընտանիքների անդամների վրա, եթե նրանք չեն հանդիսանում գտնվելու վայրի պետության քաղաքացիներ և (կամ) մշտապես չեն բնակվում այդ պետության տարածքում, տարածվում են սույն Կարգի 14-րդ կետի «դ» և «ե» ենթակետերը:

17. Բյուրոյի Նախագահը կամ Բյուրոյի աշխատակիցը կարող են զրկվել անձեռնմխելիությունից այն դեպքում, եթե անձեռնմխելիությունը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, և անձեռնմխելիությունից զրկելը չի վնասում այն նպատակներին, որոնց համար այն տրվել է:

18. Բյուրոյի Նախագահը, Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալը և Բյուրոյի Նախագահի տեղակալը անձեռնմխելիությունից զրկվում են Ղեկավար խորհրդի կողմից: Բյուրոյի աշխատակիցը անձեռնմխելիությունից զրկվում է Բյուրոյի Նախագահի կողմից:

19. Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցներն իրավունք չունեն զբաղվելու ձեռնարկատիրական և իրենց կամ այլ անձանց համար շահ հետապնդող

ցանկացած այլ գործունեությամբ՝ բացառությամբ գիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեության:

Գիտական, ստեղծագործական կամ մանկավարժական գործունեությունից ստացված եկամուտները ենթակա են հարկման՝ համաձայն միջազգային պայմանագրերի և գտնվելու վայրի պետության օրենսդրության:

20. Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները պետք է պահպանեն գտնվելու վայրի պետության ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցի օգտագործման դեպքում երրորդ անձանց պատճառված վնասներից ապահովագրման վերաբերյալ օրենսդրության պահանջները:

21. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների հավատարմագրման հարցերը կարգավորվում են գտնվելու վայրի պետության տարածքում Բյուրոյի տեղակայման պայմանների վերաբերյալ միջազգային պայմանագրերով:

22. Բյուրոյի Նախագահի կամ Բյուրոյի աշխատակիցների՝ որպես Բյուրոյի Նախագահ կամ Բյուրոյի աշխատակիցներ, իրենց գործառույթների և գործողությունների իրականացման շրջանակներում ասվածի կամ գրվածի նկատմամբ վարչական, քաղաքացիական և քրեական անձեռնմխելիությունը պահպանվում է նաև նրանց լիազորությունների ավարտից հետո:

IV. Աշխատանքային հարաբերությունները և սոցիալական երաշխիքները Բյուրոյում

23. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ՝ Բյուրոյի ներքին կանոնների հաշվառմամբ:

24. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների կենսաթոշակային ապահովումը կատարվում է այն Կողմի օրենսդրության համաձայն, որի քաղաքացիներ նրանք հանդիսանում են:

Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների կենսաթոշակային ապահովման պարտադիր հատկացումները համապատասխան Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով իրականացվում են Բյուրոյի և/կամ նշված անձանց կողմից այն Կողմերի կենսաթոշակային ֆոնդեր կամ պետական բյուջե, որոնց քաղաքացի նրանք հանդիսանում են:

Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների՝ Բյուրոյում աշխատելու ժամանակահատվածը հաշվարկվում է որպես ապահովագրական (աշխատանքային) ստաժ՝ կենսաթոշակի սահմանման համար:

Որպես Բյուրոյի Նախագահ և Բյուրոյի աշխատակից եղած ժամանակահատվածում ստացված շահույթը հաշվի է առնվում կենսաթոշակի չափը որոշելիս՝ համաձայն այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանած դեպքերի և կարգով, որի քաղաքացի նրանք հանդիսանում են:

25. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների սոցիալական ապահովագրությունը (բացի կենսաթոշակային ապահովագրությունից) կատարվում է գտնվելու վայրի պետության օրենսդրությանը համապատասխան, այնպիսի պայմաններով և կարգով, որոնք գործում են գտնվելու վայրի պետության քաղաքացիների նկատմամբ:

Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների օգտին սոցիալական ապահովագրության նպատակով վճարվող ապահովագրական գումարները (բացի կենսաթոշակային ապահովագրությունից) իրականացվում են Բյուրոյի բյուջեի հաշվին՝ գտնվելու վայրի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

26. Սոցիալական ապահովագրության նպաստներ նշանակելիս սոցիալական (աշխատանքային) ստաժում հաշվարկվում է Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների աշխատաժամանակը՝ համաձայն գտնվելու վայրի պետության օրենսդրության:

27. Իրենց լիազորությունների իրականացման ընթացքում Բյուրոյի Նախագահին և Բյուրոյի աշխատակիցներին տրամադրվում է ամենամյա վճարովի արձակուրդ 30 օրացուցային օր տևողությամբ:

28. Իրենց լիազորությունների իրականացման ընթացքում Բյուրոյի Նախագահին, Բյուրոյի Նախագահի առաջին տեղակալին և Բյուրոյի Նախագահի տեղակալին Բյուրոյի բյուջեի հաշվին տրամադրվում է տրասնպորտային սպասարկում:

29. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների աշխատաժամանակը մտնում է այն Կողմի պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժի մեջ, որի քաղաքացի նրանք հանդիսանում են՝ պետական (պետական քաղաքացիական) ծառայություն անցնելու ընթացքում սոցիալական երաշխիքների կարգավորման և պետական ծառայողներին (դաշնային պետական քաղաքացիական ծառայողներ) երկարամյա ծառայության դիմաց կենսաթոշակներ նշանակելու համար:

30. Աշխատանքային վեճերի դեպքում Բյուրոն ճանաչում է գտնվելու վայրի դատարանների իրավասությունը:

31. Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների բժշկական սպասարկումն իրականացվում է Բյուրոյի բյուջեի հաշվին, բժշկական հաստատության կողմից՝ ապահովագրական կազմակերպության հետ կնքված կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրի հիման վրա:

Իրենց պաշտոնեական (ծառայողական) լիազորությունների իրականացման ընթացքում Բյուրոյի Նախագահին և Բյուրոյի աշխատակիցներին, ովքեր Բյուրոյի գտնվելու պետության քաղաքացիներ չեն, Բյուրոյի բյուջեի հաշվին տրամադրվում են ծառայողական բնակելի տարածքներ:

Հայաստանի Հանրապետության վերապահումները
«Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին»
համաձայնագրի վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագրի հավելվածի («Բյուրոյի, բյուրոյի Նախագահի և բյուրոյի աշխատակիցների սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիության մասին» կարգ) 14-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթները չեն կիրառվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ:

2. Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագրի հավելվածի («Բյուրոյի, բյուրոյի Նախագահի և բյուրոյի աշխատակիցների սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիության մասին» կարգ) 24-րդ կետը Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ կիրառելիս, ովքեր զբաղեցնում են Բյուրոյի նախագահի կամ Բյուրոյի աշխատակցի պաշտոնը, Բյուրոյի նախագահի կամ Բյուրոյի աշխատակցի կենսաթոշակային ապահովման պարտադիր պահումները կատարվում են Բյուրոյի կողմից:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. նոյեմբերի 22-ին ստորագրված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային Բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն